ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Հատոր 2, համար 1, 2008թ.
www.ysmu.am

ՄԱԼԱՐԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դավիդյանց Վ. Ա[1]*., Ավետիսյան Լ. Մ.[1], Եժով Մ. Ն[2].

1. Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարություն, Առողջապահության ազգային ինստիտուտ
2. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Եվրոպական գրասենյակ, Կոպենհագեն, Դանիա

Ամփոփում

Զարգացող երկրների առողջապահության ճանապարհին մալարիան (դողէրոցք) նախկինի պես հանդիսանում է հիմնական խոչընդոտ: Մեր մոլորակի վրա ապրող 2 միլիարդից շատ մարդ, ապրելով աշխարհի ավելի քան 100 «էնդեմիկ» երկրներում, վտանգված են հիվանդանալու մալարիայով: Հաշվի առնելով ժամանակակից էպիդեմիոլոգիական իրավիճակն ու այդ հիվանդության մեծ բացասական ազդեցությունն երկրների սոցիալ-տնտեսական զարգացման վրա, ԱՀԿ-ն ինտենսիվ միջոցառումներով արձագանքեց մալարիայի գլոբալ սպառնալիքին:

1998 թ. ստեղծվել է մալարիայի դեմ պայքարելու համար գլոբալ մասշտաբի Roll Back Malaria (RBM) կոալիցիա, որին բնորոշ է համատեղ կարգավորման գործողություններն ու գիտական-հիմնավորված ռազմավարությունը: Վերջին տարիներին կտրուկ մեծացել է գլոբալ համա-գործակցությունը: Չնայած խոշոր ֆինանսական ներդրմանն ու լարվածության ճիգերին, նախկին ԽՍՀՄ-ի հարավային սահմաններում և Թուրքիայում մալարիան արմատապես չվերացավ: 1970-1980 թթ. տեղային բռնկումներ և համաճարակներ գրանցվեցին Ադրբեջանում, Տաջիկստանում և Թուրքիայում: Վերջին տարիներին զանգվածային հիվանդության դեպքերի գրանցմամբ մալարիայի «վերադարձ» է գրանցվել Կովկասում և Միջին Ասիայում: Մալարիայի դեմ պայքարը ձեռք բերեց սոցիալ- էկոլոգիական նշանակություն, ինչի մասին է վկայում տարված աշխատանքը և միջոցառումները՝ ուղղված ընդդեմ այդ վտանգավոր հիվանդության: Կապված դրա հետ, ԱՀԿ տարածքային Եվրոպական գրասենյակն իր վրա վերցրեց պարտականություն՝ կազմա-կերպել ինտենսիվ արձագանքման համակարգ՝ ի պատասխան մալարիայի սպառնալիքին և 1999 թ. վերամշակեց տարածքային ռազմավարության RBM ծրագիրը: Ներկայումս այդ ռազմավարությունն իրականացվում է: Այժմ ՀՀ իրականացվող հակամալարիային ծրագիրն իր մեջ ներառում է.

մալարիայի ախտորոշմանն ու բուժմանը ներգրավված բոլոր մակարդակների բժշկական և լաբորատոր անձնակազմի վերապատրաստումը, պատրաստակամությունը համաճարակի նկատմամբ,

. հաղորդակցությունը,
. էպիդեմիական վերահսկողությունը,
. զանգվածային սանլուսավորումը,
. տարբեր մասնագետների համագործակցությունը:

Միջոցառումները, իրականացվող RBM ծրագրի շրջանակներում, մեր երկրի առողջապահու-թյան նախարարության, կառավարական այլ կազմակերպությունների, RBM տարածքային Եվրոպական բաժնի, ՄԱԿ-ի Մանկական ֆոնդի (UNICEF), Կարմիր խաչի և Մահիկի Միջազգային Ֆեդերացիայի, Համաշխարհային պարենային ծրագրերի (WFP) և այլ կազմակերպությունների կողմից ունեն ամենայն աջակցություն:

2003 թվականին Հայաստանը վերանայեց մալարիայի դեմ գոյություն ունեցող պայքարի ռազմավարությունը, նրա խնդիրներն ու մոտեցումները, նվաճված արդյունքների տեսան-կյունից գնահատեց հիմնախնդրի արդի վիճակը՝ նկատի առնելով այս հիվանդության հսկո-ղությունից մինչև ամբողջովին վերացումը: Տվյալ հոդվածի գլխավոր նպատակն է՝ ներկայացնել արդյունքներն ու առողջապահության նախարարության համակարգի նվաճումները մալարիայի դեմ պայքարում, որոնց համատեղ գնահատականը թույլ կտա իրականացնել միջոցառումներ՝ ուղղված այդ հիվանդության հսկմանը, մեր երկրում դրա արմատախիլ արմանը:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY